

ԿՐՈՆԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ժ. ՈՂ. ՈՂ. ՈՅ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՆԳԵՐԶ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՄԲԷ.

(Շարունակ-ի-ն) :

«Սահմանադրութիւն կարգաց» ընկալեալ է նահապալիէն Տեսանէ Գլխաւորէ՝ Նարգիս-նեցաւ ընդ յեւն Եղեակայ՝ հրահանաւ Երա-նելոյն Սահակայ Եղեակայոսապետին Հայոց, և նորին Երա-նեցայ ին նորին սահմանեցաւ կարգ ու-իւրի և որոշու-ն իմաց, :

«Բանդի ոմանք կարծեցին աղիտու-թեամբ այլ զոմն Եկեղեցի ասել Առա-րան, և այլ զոմն՝ Վանս. և տխմար բա-նիւք իւրեանց կամեցան կռիւս, հերձու-ծըս մուծանել ի միաբանութիւն հաւա-տոյ, և մուռացան զբանն պատուիրանին որ ասէ. Մի է Տէր. մի հաւատ, մի մկր-տութիւն. զի որ այլ և այլ կամի ասել, զհաւատոյ ցուցանէ զբաժանումն. քանզի Եկեղեցի ոչ ծանուցանէ զայդ պատուի-րանն Վատուծոյ, որ ի քարանց և ի փայ-տից շինեալ է, այլ զհաւատովն շինեալ զազգս մարդկան ի վերայ վիմին Հառա-տութեան, ապա ուրեմն ճշմարիտ հաւա-տըն է Եկեղեցի. որ գումարէ և շինէ ըզ-մեզ ի մի միաբանութիւն զիտութեան Որդւոյն Վատուծոյ. քանզի նոյն ինքն Կե-նարարն ուսուցանէ ասելով ցՊետրոս. Դու ես վեմ. և ի վերայ այդր վեմի շինե-ցից զԵկեղեցի իմ. և դրունք զԺոխոց ըզ-նա մի՝ յաղթահարեացին, :

Երգ զի՞նչ իմանայցիմք ասին զՊետ-րոս Վ. Էմ. միթէ որպէս զմի ոք ի քարանց.

քան լիցի. այլ մարդ բանաւոր և զու-ն առաքելական դասուն. և զի անդրդուելի հաւատով խոստովանեաց զՔրիստոս՝ Որ-դի Վատուծոյ, երանութիւն ընկալաւ և Վ. Էմ. անուանեցաւ. ապա ուրեմն և շի-նեալքն ի վերայ նորա ոչ են քարինք ան-շունչք, այլ մարդիկ նորին հաւատոց հա-ղորդակիցք. քանզի ոչ դանդաղեն զիրք սովին անուամբ ձայնիլ զՏէր մեր և Փր-կիչ երբէք ըստ պիտոյիցն. յիշատակէ ահա և երանելին Պաւղոս զանուն Ե-կեղեցւոյ ասելով. Տէր եղն Վատուած յեկեղեցւոյն՝ այս են, նախ զառաքելաւ, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդա-պետս, և որ ինչ ի կարգին է : Տեսա-նե՞ն զյարմարումն և զպանծալի բարձրու-թիւն Եկեղեցւոյ, զսուրբ և զամբիծ հա-ւատոյ ասեմ, որոյ առաքելաւք և մարգա-րէք և վարդապետք են նաւավարք, ունե-լով նաւապետ՝ զմարմնացեալ և զմարդա-ցեալ բանն Վատուած և զհաւատն. զնա իսկապէս խոստովանիմք ասել Մայր Եկե-ղեցւոյ ի Քրիստոս հաւատացիլոց. քան-զի զօրէն նաւի զամենեւին յինքն ամփո-փելով ցամաքաթեւ յամենայն աշխարհա-կան ծովանոց, կարող լինի ապրեցուցա-նել, բայց միայն աներկեան պահեստոք զհաւատս, որով շինեցաքս, բանաւոր և մտաւոր Եկեղեցւոյ՝ ի վերայ հիման առա-քելոց և մարգարէից : Եյամ Եկեղեցւոյ ուսուցանէ Տիմոթեայ՝ ինամ ունել ե-րանելի Եռաքելայն, սիւն և հաստատու-թիւն և ճշմարտութիւն անուանելով. յայանի է, ասէ, ի նմա խորհուրդ Վա-տուածպաշտութեան, այլ միայն բանաւոր եկեղեցի. վասն այսորիկ և սաղմունն բարձ-րագոյնս գոչէ իսկ, թէ Օրհնութիւն նորա

յեկեղեցիս սրբոց է: Ահա և Սամուէլ մարգարէ՛ որ Հաւատարիմ կոչեցաւ, զսոյն ուսուցանէր ի պատուիրելի իւրում առ Սաւուղայ: Իբրեւ գնացես յինէն, առէ, հանդիպեսցիս Ակեղեցւոյն մարգարէից՝ մարգարէացելոցն, և դարձեալ եթէ Ակեղեցացո զժողովուրդն ի Վանայ մինչև ցրտերոսարբէէ, իբրեւ զայր մի, և Ակեղեցի մարգարէացելոց մարգարէից, և Սամուէլ կայր ի վերայ նոցա:

Աւօրհնեաց Սողոմոն զեկեղեցին Խարայել: Աւ լու եղև բանս այս յականջս եկեղեցւոյն: Աւ եկեղեցիքն հաստատէին ի հաւատս: Աւ լուաւ զպատգամս զայս ի միջոյ հրոյն յաւուրն Ակեղեցւոյ: Քանզի Ակեղեցի արար զուրաւ ամենայն մարգարէիցն Սալմէս զցեղն Խարայել հրամանաւն Աստուծոյ: Ակեղեցացո, առէ, ըզժողովուրդն ի դուռն խորանին վկայութեան. տեսանէս, զի ոչ եթէ զխորանն կոչէ Ակեղեցի, յորում կայր արկն կտակարանաց, և միւս խորանն, որ կոչէր Արբութիւն սրբութեանց, այլ զհաւատացեալ ժողովուրդն աւետարանէ. վասն այսորիկ ևս առաւել բարձրագոյնս և առաքեալն Պօղոս նորագոյնս իմն և յաւատ հրաշալիս . . . քանզի ցուցանէ եկեղեցիս անդրանկաց գրեւոց ոչ յերկրի՝ այլ յերկինքս, որոց անուանքն գրեալ են ի դպրութիւն կենաց. վասն որոյ Փրկիչն Տէր ասաց խնդալ զառաքեալսն. թէ խնդացէք, զի անուանք ձեր գրեալ են ի դպրութիւն կենաց:

Տեսնի՛ր զճշմարիտ հիմն Ակեղեցւոյ՝ զի ընդ ամենայն տիեզերս հաւատացեալք ի Քրիստոս՝ Առաքելական յորջորջն եկեղեցի, վասն Տէրունական հրամանին որ

առ նոսա, թէ՛ Պնացէք ընդ ամենայն երկիր. աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն սրբոյ. ուսուցէք նոցա պահել զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ:

Արդ թէպէտև փոքր ի շատէ ասացաք յօրինակաց որ բազմապատիկ կան ի զիրս սուրբս, վասն Ակեղեցւոյ սրբոյ բաւական եղցի, քանզի յայտնի եղև անքակ միութիւն, և ոչ երկպառակել, որպէս ոմանք կամեցան պատառումն առնել և կռիւս ազադակի տխմարութեամբ իւրեանց. զի ի ճշմարիտ հօտէն Քրիստոսի, որ է Ակեղեցի Աստուծոյ, նա միայն է պատառեալ և անջատեալ, որ ի հերձուածս կործանի, և մեղաց լիցի պաշտօնեայ. զի մեղքն բաժանեն և օտարացուցանեն. բայց զայս առնելով մեր, զանբաժանելի միաւորութիւն եկեղեցւոյ յայտարարաք, և թէ զինչ է եկեղեցի: Այլ ոչ եթէ արհամարհել ուսուցանեմք զչինուածովք պատուեալ տեղիսն, որ անուանի Ժողովրդանոց, քանզի և ի նոսա ժողովն քահանայք և մանկունք ուխտի պաշտօնեայք կատարել զազօթս և զննգրուածս. վասն որոյ Ազօթաբանք կոչն և սրբաբանք. զի հաստատեալ կայ ի նոսա անբունական սեղանն, յորոյ վերայ զհոցն և զգինին պատարագեմք յօրինակ կենդանարար մարմնոյ և արեանն Քրիստոսի, որ միշտ անձախապէս բաշխի մեզ ի քառութիւն մեղաց, և ի նոսա կայ ուղղեալ աւագանն մկրտութեան, որով լուսաւորեալք վերստին ծնանիմք Հոգւովն սրբով, և դրոշմիմք ի յոյսն կենաց յաւիտեանականաց, և հանապաղ անդր դուժարելով լսեմք զսաղմոսելութիւնս և

զպատգամս պատուիրանացն Աստուծոյ, և վասն զի միշտ անդր ժողովինք, և ապաւէն ապաստանի է մեզ զամենայն ասացեալսդ ի նմա կատարել, սովորութիւն եղև Աշխղեցի անուանել յարանունարար, այլ ոչ բնաւորարար. և քանզի բազում այսպէս կան վկայարանք ուրուք յանուն, և սակայն ճանաչեմք թէ հոմանուն նոցա են շինեալքն, այլ ոչ թէ ինքեանք իսկ, յորոց անուն շինեցանն, և մի պատիւ է ամենեցուն, վասն զի մի խորհուրդ կատարի. քանզի սեղանն ամենայն ուրեք Տէրունական տոի և պատարագն. բայց միայն տօնիւքն զանազանին. զի յիւրաքանչիւր տեղւոյ սովորութիւն է կատարել զկարգ տօնիցն:

Արդ արժանաւոր է և զառաջին ճառ բանին յիշատակել, թէ որպէս և կամ յի՞նչ պատճառ շինեցան վանք. քանզի յայտմ ոչ եթէ Հայոց միայն աղգ կալաւ փոյթ յանձին, այլ և Հայնք, և Հռոմք, և Ասորիք, և այլ ամենայն ազգք ի Վրիստոս հաւատացելոց:

Ո՞ր և երիցս երանեալ քաջ նահատակն Վրիստոսի Վրիգորիոս *) կատարեաց շնորհեալ նմա ի Հոգւոյն սրբոյ զօգուտ մատակարարութեանն. քանզի բազում օգտից է առիթ և սիւն և ճշմարտութիւնն ուխտի մանկանց. զի փայփայէ և թեւակոխի ի հրահանգս հոգեւորս, և զոր ամենեցուն քահանայից և ժողովրդականաց Կարգել և մեծարել ըզվարդապետս և միանգամայն իսկ զամե-

նայն պաշտօնեացս ուխտի առանց տարակուսանաց, (որք*) անդր մտանն յընդունելութիւն կամաւորական. վասն այնորիկ և զիպոզագոյն եղաւ անուանքն, զի անաթրատում, որոց պիտոյ իցեն՝ տացին. և ոչ միայն առ օտարս է նոցա յաճախել, այլ և, առաւել գեղջն, յորում շինեցաւ, զի օրէն է նոցա սփոփել զհիւանդս և մխիթարել զսգաւորս. և զի՝ որ ամուսնութեանն են պարապեալ քահանայք՝ բազում անգամ պատաղին ի մշակութիւն, և կանանց իւրեանց հնարեն լինել հաճոյ, որպէս Առաքելական իսկ ճշմարտէ բանն: Իսկ ի վանեարն բնակեալք՝ կուսութեամբ են պարկիշտացեալք, միշտ մարտնչելով ընդ հուր ախտին, զոր բնութիւնն վառեալ բորբոքէ, և անյապաղ զպաշտամանն կատարեն կարգս, զխաղաղութիւն խնդրելով աշխարհի, և զգեղջն շինութիւն և առողջութիւն ի տուռնջեան և ի գիշերի բազում արթնութեամբ. վասն այնորիկ ոգատ յամենայն հարկապահանջ իշխանաց՝ սահման ընկալաւ և անդս, և զիրիցագոյն պատիւ ժառանգեաց յուխտի սրբում եկեղեցւոյ:

Արդ ամաչեացեն որք յանդգնեցան տրամարութեամբ և անզգամութեամբ իւրեանց այլ զոմն եկեղեցի ասել, և այլ զոմն վանս. քանզի յայտնի եղև ի (մի) միաւորութիւն անդամոց եկեղեցւոյ ի Վրիստոս հաւատացելոց, զի անդամք եմք միմեանց ի շինութիւն հաւատոյն սիրով. նոյնպէս և ժողովրդանոցք և մատրունք, զոր սովորութիւն եղև ի վաղնջուց կոչել

(*) Աստի երևի, թէ զայս սահմանադրութիւն սրբոյն Վրիգորի բնագրածակալ է սուրբն Սահակ, այլ զվերնագիրն թողեալ անուամբ նորա:

(*) Փակագծով եղեալ բառքն պակասն ի բրնագրին:

և կեղեցի. թէպէտ և բազումք են ըստ գիւղի՝ գիւղի՝ և քաղաքաց քաղաքաց, սակայն ոչ են բազումքն ի բազումն բաժանեալք, այլ ըստ աստիճանի իշխանութեան. և այսպէս յարմարեալ անյապաղ և բազում փութով պարտ է ի նմին մըշտընջենաւորել: Վանդի ոչ և թէ ի մարդկային կարծեաց է ճառեցեալ սահմանադրութիւնս, այլ յԱստուածաշունչ զըրոյ երկրորդեցաւ ի մէջ բացորոշաբար, և որ հակառակ կայ, ոչ մարդկան՝ այլ Աստուծոյ հրամանին կայ հակառակ. և որք կամինն կալ հակառակ, անձանց դատաստանս ընդունին:

Երդ պարտ և պատշաճ է մեզ զհատուցմունս շնորհիցն սահմանադրելով (ակնարկէ ի հասս քահանայից, որ ի սըրբոյն Պօլիդորէ կարգեալ Եգապն կոչի), հաստատել յայտարարութեամբ, թէ ո՞րպէս պարտ է հատուցանել ի վանս, և կամ ամուսնացելոց քահանայից,:

ԳԼ. Բ.

« ԿԱՆՈՆՔ Ս. ԳՐԻԳՈՐԻ ՊԱՐԹԵՒԻ: »:

« Եգաբ, որ մասնական է պատարագ, կէս կաշոյն երթիցէ ի վանս և երկու մասունք ճրագունին, իսկ ի քահանայիցն՝ բովանդակին. և ոչնար ի մորթն և դմակն անդամփն, և ճրագուն և խախացոցն: Եւ պանդուխտք որք ի տունս քահանայիցն են՝ և նոցին եղբարց նոյնպէս տացին, և զամենայն պատարագս հասարակաց կերիցեն պաշտօնեայք և աղքատք բազում մեծարանօք և եղբարք հաւատացեալք. և զհաց տօնի նորեացն առ հասարակ կերիցին ամենայն պաշտօնեայքն. նոյնպէս

և զհաց ապաշխարողացն, զոր յաւուրս Վառաննորդացն առնեն հանգիստ ի շաբաթու և ի կիրակէի: Բայց պատարագք որ ի վանս կատարին երախայրիքն, եթէ անապատ իցէ գեղջն՝ անդր տայցեն. ապա թէ ոչ՝ ամուսնացելոց քահանայիցն տացին. քանզի ոչ է օրէն ումեք զհաստեառն ի յարկս իւրում թողուլ:

Իսկ ամուսնացելոց քահանայիցն եղիցին տօնք շաբաթն զատկի և զատիկն սուրբ և երկրորդ զատիկն. և յերրորդ զատիկն և ի վեր՝ կիրակէ, այն ամենայն յիսներեկին և տօն սրբոյ Պենդակոստէին, յորում Հոգին սուրբ Առաքելոցն շնորհաց լեզուս, և տօն սրբոյ Աստուածածնին և միշտ կուսին, և Վարդավառն. բայց ի մատաղինեացն, որ է կատարումն քառասնորդաց առաքելական տօնի, հաւատացելոց զատկի և պտուղ յամենայն արմտեաց քոռ քոռ. և պատարագք որ մասնական են, կէս կաշոյն և ճրագուն զերկուս մասունն ի վանսն թողով, լուցմանն և պտշտամանն, զմինն տարցեն զլուցման մասն. և որ ոչնար է, դմակն անդամփն, և ճրագուն և խախացոցն և մորթն, և զգեստտան տիկնաց միայն վախճանելոց: Եւ տօն Բարեկիսեանին և Ողորմեանն մեծ, որ թարգմանի բարեբանեալ օր. և թէ այլ տօն ոք կատարիցէ յանուն առաքելոց և մարգարէից, հասարակ եղիցի. զի այնպէս աներկեան և առանց հակառակութեան պաշտօնէիցն կացցին դասք, զիտելով՝ որո՞ւմ շնորհի արժանաւորք եղն. զի պարկեշտութեամբ և ուսումնասիրութեամբ վարժեացին, և մի՛ եղիցին բանակութիւք, այլ սիրունք և արթունք և զուարթունք յամենայնի, զի բաւական լի-

ցին խրատել զստահակս և զծուլացեալսն ի կարգս հաւատոց. քանզի այդ է գործ Սարգսպետի և հոգեոր հովուի, :

“Ե.յս Սահմանադրութիւն կարգաց գրեցաւ հրամանաւ երանելոյն Խոսհակայ մեծ Հայրապետի Հայաստան աշխարհի, ընկալեալ ի քաջ նահատակէն ի Տեառնէ Պարիզորէ, թարգմանեցաւ միայն ի Յունէն ի Հայ: Երգ ելէ որ անհնադանգեալ կանոնիս նորաձեւել յանդգնեցի զկարգեալ Սահմանադրութիւնս, մի ընկալցի մասն և վիճակ ժառանգութեան յարքայութեանն Վրխատուի Կստուծոյ. և որ որ միաբանեալ կատարեցէ, ընկալցի զօրհնութիւն ի Տեառնէ Կստուծոյ, հաղորդելով պարգեացն և անվախճան հանդրատեանն և երջանկին Պարիզորի և Հօր մերոյ Խոսհակայ և նոցին հետեւեցելոցն ճշմարիտ ուղղափառութեան, որք ի մեծն և յերեւելումն աւուրն են պսակելոց յամենաբաւական Մշոյ, անթարգմանելի պայծառութեամբ մշտնջենաւորեալք ի յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից, :

ԳԼ. Գ.

Եւսման ժողով յԱշխատ (Թօթրադալայ) վանք բարեկարգելոյ զԵկեղեցականս և զաշխարհականս :

(Եմք Տեառն 365): Սրբոյ և մեծին Ներսիսի ձեռնադրեալ ի Սեւակի Բահանայապետ Հայոց ըստ խնդրանաց Երշակոյ արքայի և նախարարացն, եկեալ ի Հայաստան՝ ընկալեալ եղև իբրեւ հրեշտակ Կստուծոյ. և ըստ հարցն իւրոց օրինակի պայծառացուցեալ զաշխարհս մեր ամենայն

նայն բարեկարգելու հարգօք և ուղղութեամբ առ ի նոցանէ մնացելովքն, նորոգեաց յամենայնի և զուգիւ Սահմանադրութիւնս նոցին. որոյ և ջանացեալ բառնալ ի միջոյ զպէս պէս անկարգութիւնս, որք յայնմ ժամանակի մտեալ էին յաշխարհս մեր, խորհրդով Երբային առնէ ժողով Ապիսկոպոսաց և աւագ իշխանաց յԱշխատ քաղաքի :

Ապա հրամանաւ թաքաւորին արգել ժողովովն նպովեք զեւրաքանչիւր անկարգութիւնս և ըստ այնց սահմանեաց :

Նախ՝ արգել որդեոց նախարարաց ստնուլ ի կնուութիւն զմերձաւոր ազգականս, որոց սովորութիւն էր յայնժամ վասն պահելոյ զսեպհական ազատութիւն ցիղի իւրեանց :

Նրկրորդ՝ եթարձ զկոծ զոր առնէին սատիկ ի վերայ մեռելաց պէս պէս ոճիրս և անկարգ գործս ըստ հեթանոսաց :

Նրրորդ՝ յաղագս ուրկաց և բորոտից հրամայեաց շինել բնակութիւն ըստ իւրաքանչիւր գաւառաց ի բարեխառն վայրի. որոց ախտիցն փոխադրական գոլով, հալածէին ի քաղաքաց և զիւղից, և բնակելով յանմարգաբնակ տեղիս, սովամահ կորնչէին. նոյնպէս և վասն հիւանդաց՝ հիւանդանոցս, և վասն կաղաց և կուրաց՝ անկերանոցս և զայլս այսպիսիս. և յաղագրս ամենեցուն սոցա կարգեաց հասս և տուրս ի զիւղից և ի քաղաքաց, կարգելով ի վերայ նոցա խնամատարս և սպասաւորս, յանձնելով զամենեցուն զհոգսն ի սարկաւագ իւր ի խաղ :

Չորրորդ՝ յաղագս որբ և այրի ազքատաց հրամայեաց շինել որբանոցս և այրիանոցս, և կարգեաց նոցա առանձին հա-

սըս, զի անխնամ մնալով նոցին՝ ոմանք ի դողութիւն, և այլք յայլ և այլ անկարգութիւնս մտաբերէին :

Հինգերորդ՝ յաղագս հիւրոց և օտարաց հրամայեաց շինել հիւրանոցս յիւրաքանչիւր քաղաքի և ի գիւղ. և կարգեաց ռոճիկս ի գիւղից և ի քաղաքաց. զի ոչ գտանելով նոցին հիւրոցն և օտարաց ասպնջականութիւն յումեքէ, մնային բացօթեայք և գործէին չարիս :

Վեցերորդ՝ հրամայեաց շինել զերկս դասս բնակութեան յաղագս կրօնաւորաց, որք ի նմին ժամանակի առ սրբոյն Ներսիսի դատարկաշրջիկ լինէին, և ոմանք նստէին ի տունս աշխարհականաց ի քաղաքի. և այլք բազումք հանապաղ բնակէին ի գիւղս իբրեւ ի վանս. որոց աղագաւ կառոյց եղբայրանոցս յանապատ տեղիս. իսկ վասն առանձին ճշնողաց՝ միայնանոցս, և առանձնակեցաց՝ խրճիթս բազումս, կարգեալ յամենեւին ի սոսա կանոնս :

Չայս ամենայն կանոնադրեալ սրբոյն Ներսիսի ժողովով և հրովարտակաւ Արքային՝ կարգեաց ի վերայ կրօնատանաց տեսուչ և հայր՝ զՇաղիտա աշակերտ սրբոյն Վանիէլի ծերոյն՝ և զՆփրեմ և զՆպիսիան և զՎինդ Սղկունի. և ըստ նոցին ընտրութեանց եղ Առաջնորդ յամենայն վանօրայս :

Չորոց ամենայնէ լիօրէն գրէ Խորենացին Սովսէս ի քսաներորդ զլուս երկրորդ զրոց պատմագրութեան իւրոյ, զորոյ ըզբանն ոչ կարեւոր համարիմք որպէս և զայլոց պատմագրաց ազգիս յետ նորա՝ յառաջ բերել յիւրաքանչիւրոցն Հայրապետաց ի գործս ժողովոցն արարելոց

ի նոցանէ, զի մի՛ ստուարացի աշխատութիւն մեր այս՝ Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, բայց եթէ ուրիք ուրիք առ հարկի ստիպիցիմք դնել զայնս, յորոց վերայ իցէ հիմնալ զլուս բանից մերոց :

ԳԼ. Դ.

Ներքոյ թողլ ի Վաղարշապատ Հանան Կաթողիկոսաց Ժրոյ՝ յԱմենայն Կեսաբիոյ :

(Վ.ժ. Տետոն 366)։ Տեսեալ Արշակայ և նախարարացն և համօրէն Աւագանւոյն զբարեկարգութիւնն Ներսիսի մեծի յեկեղեցիս Հայաստանեայց, և խնդացեալ ընդ այն, կամեցեալ ըստ օրինակի Աթոռոյն Արուստակի մի և այլոց տեղեաց՝ պատուել և զԱթոռ սրբոյն Պրիգորի Պատրիարքական կոչմամբ, ժողով մեծ գումարեցին Ապիսկոպոսաց աշխարհին Հայոց ի Վաղարշապատ, և կարգեցին զսուրբն Ներսէս Պաթողիկոս՝ և Պատրիարք յԱթոռ սրբոյն Պրիգորի. յորմէ հետէ և Հայրապետք Հայոց ոչ ևս յաւելին առնուլ ձեռնադրութիւն Պաթողիկոսութեան ի Արարիոյ, այլ յԱպիսկոպոսաց Ազգիս մերոյ, ըստ վկայութեան Յովհաննոս Պաթողիկոսի պատմաբանի ի տասներորդ դարու, զորմէ ոչ ինչ յիշատակութիւն առնէ Խորենացին, որ զսո. ի Ներսիսէ զբարեկարգութեանցն լիօրէն գրէ։ Այլ պատմաբանն Յովհաննէս Պաթողիկոս յիշելով զվեց պատրիարքական Աթոռս ցայն վայր ի վերայ աշխարհի, ասէ։

« Ըստ սմին ստիկի և մերն թագաւոր Արշակ և նախարարք Հայոց համարձա-

կութիւն առեալ, կացուցին ի պատրիար-
զութիւն Տանս Թորգոմայ զմեծն Ներ-
սէս, փաստս իրաւախոհն ըստ արժանին
ի մէջ առեալ զսուրբ Առաքեալն մեր ըզ-
րարդուղիմէսս և զԹադրէոս, որք Ասգա-
նազեանս ազին վիճակեցան ի Տեառնէ
քարոզք և Աւետարանիչք ։

Յայսմ Ժողովի սահմանեցին, զի յայ-
նրմ հետէ Սաթողիկոսք Հայոց յիւրեանց
Եպիսկոպոսաց առնուցուն զձեռնադրու-
թիւն, որպէս և արարին ընդ յաջորդաւ
մեծին Ներսիսի՝ Շահակաւ զորմէ նոյն
պատմաբանն վկայէ Յովհաննէս, թէ «Ոչ
ևս ըստ սովորութեանն առաջնոյ առա-
քեալ զնա ի Աեսարիա, այլ լքեալ ի բաց
զօրէնն՝ առաջին ըստ օրինի Պատրիարքաց
կալան կարգ Ժողովով Եպիսկոպոսաց ձեռ-
նադրել ։

Ըստ որոյ երեւի զի թէև Առաւելորին
մեր ընկալեալ էր զձեռնադրութիւն ի
Ղլեոնդեայ, այլ դիպող ժամու ֆնային
լքանել զպայման ուխտին եղելոյ ի նմին
Ղլեոնդեայ առ Տրդատաւ՝ ընդ սրբոյ լու-
սաւորչին. զոր զրէ Ագաթանգեղոս ըստ
այսմ. «Հաստատեալ կայցէ, ասէ, վը-
կայութիւն ի մէջ երկոցունց կողմանցս,
զի պարգեւաբաշխութիւն նորոգեալ Քա-
հանայապետութեանդ ձերոյ նահանգի՝
առ ի մէնջ կայցէ անշարժ յեկեղեցւոջս
Աեսարու. ուստի և հանդերձեցաւ ձեզ
պատրաստութիւն շինութեան՝ ձեռնա-
դրութիւնդ ։ Թող զի ինքն իսկ սուրբ
լուսաւորին Պարիզոր՝ որ զձեռնադրու-
թիւնն իւր ընկալեալ էր ի Աեսարիա,
անդ զառաջինն Փոխանորդ եղ ձեռնադ-
րեաց զորդի իւր զսուրբ Արիստակէս ի
Սաթողիկոսութիւն ամենայն Հայոց ըստ

Ագաթանգեղոյ վկայութեանն. «Չեռ-
նադրեաց, ասէ, (զԱրիստակէս) Եպիս-
կոպոսութիւն փոխանակ իւր . . . և յետ
նորա կալաւ զտեղի հայրենեացն, և ան-
դէն նստաւ յԱթոռ Սաթողիկոսութեան
Հայոց Մեծաց ։

Ուստի ի սմին Ժողովի հաստատեցին,
զի և Սաթողիկոսն Հայաստանեայց Աթո-
ռոյ անկախ Եկեղեցւոյն Աեսարիոյ ըստ
այլ Պատրիարքական աթոռոց՝ ունիցի
իրաւունս ձեռնադրիլ ի ձեռն իրից Ե-
պիսկոպոսաց հանդիսացուցեալ անուամբ
և պատուով զեշխանութիւն Եպիսկոպո-
սապետութեան և պատրիարքութեան,
որպէս արարին յետ նորա ընդ Շահակ և
ընդ ամենայն յաջորդս Սաթողիկոսս ։

ԳԼ Ե.

Երբոր Ժողով ի Վաղարշապատ յազա-
րէի Հայկական Գրոց ։

(Ամբ Տեառն 402)։ Ժողովն յազա-
րէաւ Հայկական գրոց լինի ի Վաղար-
շապատ՝ հրամանաւ Վառնապահոյ ար-
քայի յամի Տեառն 402, ի խնդրոյ սրբոյն
Սահակայ և Մեսրոպայ. զի Մեսրոպը որ
էր ի Պողոս գաւառի, եկեալ առ սուրբն
Սահակ յԱթոռն Հայրապետական ի Վա-
ղարշապատ, և վերստին խորհուրդ արա-
րեալ ընդ նմա յազապ հնարելոյ զգիր
Հայկական լեզուի, յորդորեաց զնա գու-
մարել ժողով առ այս. իբր զի հարկաւո-
րութիւն մեծ էր առ նոսա տեսանել յայ-
նրմ ժամանակի. զի սուրբն Մեսրոպը ի
քարոզութեան իւրում ի հինգերորդում
ամի Վառնապահոյ՝ հրամանաւ սրբոյ Սա-
թողիկոսին ի տեղիս տեղիս, ի գեօղս և ի

քաղաքս՝ հանապազ ընթեռնոյր ժողովրդոց զԱստուածաշունչ զիրս յԱսորի և ի Պարսիկ լեզուս, ըստ որոյ և դժուարութիւն ոչ սակաւ կրէր յեզուլ ի միտս նոցին զհմաստս բանից Սուրբ Պարոգ. և այս իսկ էր պակասութիւն ազգային, զի ընդհանուր Ակեղեցիք Հայաստանեայց վարէին յարարողութիւնս՝ Ասորի գրով, և դիւանք թագաւորացն մերոց՝ պարսկականաւ յամենայն ի դործս՝ առ ի չգոյէ հայկական գրոց. մանաւանդ թէ առ ի ձեռքս բերել զուսումն Ասորի, Յոյն և Պարսիկ գրոց՝ մեծամեծ ծախուց ի ներքոյ անկանէին, զմանկունս ծանապարհորդելովն յաշխարհս հեռաւորս բազում թոշակօք ի դպրոցս Ասորի գիտութեան. որպէս զբլէ ժամանակակից պատմաբանն Պաղար Փարպեցի:

«Հոգացեալ, ասէ, յարաժամ տրտմէր Արանելի այրն Մաշտոց, տեսանելով զմեծաջան ծախս մանկանց Հայաստան աշխարհիս, որ բազում թոշակօք և հեռագնաց ծանապարհօք և բազմաժամանակեայ գեղերմամբ մաշէին զանձինս իւրեանց ի դպրոցս Ասորի գիտութեան. նաև պաշտօնք Ակեղեցւոյ ևս և կարգացմունք զրոց Ասորի ուսմամբ վարէին ի վանօրայս և յԱկեղեցիս Հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտիլ ժողովուրդն այսպիսի մեծի աշխարհի յանլուութենէ լեզուին Ասորւոց»:

Ի ժողովն անդր ի խորհրդեան յաղագս իրացն հանգամանաց, Արքայ Վառապուհ յիշեաց զասացեալն ինքեան ի Միջագետս, Աբելի երիցու Ասորւոյ՝ լինել Հայկական գրոց առ Վանիէլ Ապիսկոպոս երկրին, և զաղաչանս նորա բերել զայն ի

Հայս. զայս լուեալ յԱրքայէն՝ ընտրեցին համաձայնութեամբ զոմն հաւատարիմ ի տանէ արքային՝ Վահրիճ անուն՝ յազգէ Խաղուենեաց, և առաքեցին զնա յԱսորիս թղթով Արքային և ժողովոյն առ Վանիէլ Ապիսկոպոսն, բերել զՎանիէլեան նշանագիրսն*) ընդ ձեռն երիցուն ի Հայս:

Յիտ որոյ ամպ ի վիշտասաներորդ ամի թագաւորութեան Վառապուհոյ հրաշիւք ընկալեալ սրբոյն Մեսրոպեայ զհայկական լեզուիս մերոյ զիրս ի Սամուսատ, եբեր ի Հայաստան աշխարհ և զինչ ինչ թարգմանութիւնս Սուրբ Պարոգ, այնուհետև պայծառացուցին զԱկեղեցիս մեր, զազգային լեզու և զգրականութիւն ընդ ձեռն աշակերտաց իւրեանց երջանիկ (Թարգմանիչքն մեր:

ԳԼ. Զ.

Զորորտ ժողով ի Վաղարշապատ Հան Բաբելոնիէն Ակեղեցւոյն ընդ յեռն «Եբոյն Սահակայ:

(Ամբ Տեառն 426): Սուրբն Սահակ և Մեսրոպէ ի ջանս անդ թարգմանութեան Սուրբ Պարոգ ի պայծառութիւն Հայաստանեայց Ակեղեցւոյ, յետ ի կարգի զնելոյ զիկեղեցական զիրս մեր և պաշտամունս ժամերգութեանց, զորոց զբեցաք ի ներածութեան պատմութեանս, ձեռնարկեցին ապա և ի բարեկարգութիւն եկեղեցականաց և Ազգիս. ուստի և յամի Տեառն 426,

(*) ԶՎանիէլեան նշանագիրս ասացեալ ի Խորենացւոյն՝ համարի նա «Պարգեալ ըստ ձեռն օրինակի Յունականին վաղնջուց գտեալ նշանագիր տառից, Խոր. գիրք Գ. զԼ. ԾԲ.:

առնէ ժողով ի Աղարշապատ, և համաձայնութեամբ Ապիսկոպոսաց ժողովոյն զրէ Թուղթ Բնդհանրական, հաստատեալ զպէս պէս կանոնն վասն Ապիսկոպոսաց, Քորեպիսկոպոսաց և Քահանայից և նուիրանաց վանօրէից և Եկեղեցիաց, և վասն հասից Քահանայիցն և Արօնաւորաց, առնելով զինչ ինչ ի հարազատ կանոնաց սրբոյ Առաւորչին, զորմէ զընցաք յԱռաջին ժողովն Աղարշապատայ:

Ի ձեռագիր կանոնագիրս մեր զրեալս ընդ զանազան ժամանակս՝ ուրեք ուրեք զլեակարգութեամբ դնին կանոնքն յանուն սրբոյն Սահակայ Պարթևի, մանաւանդ յընդարձակս. յորոց որպէս երևի, համառօտեալ է և հայր Միքայէլ Չամչեան յիւրում պատմագրութեանն, զլեակարգեալ ի կանոնական թղթոց նորին Սահակայ, այլ ի մերում կանոնագրի ծառօրէն եղեալ զորով Բնդհանրական Թուղթ ասացեալն նորին զրիւյ համաձայնութեամբ ժողովոյն, նոյն և մէք յառաջ բերեմք աստէն, զի և կարեւորն մեզ՝ այն է:

“Տեառն Սահակայ Սափորայի սահման
Աղարշապատ-նեան՝ ինչ որպէս պարտ է Ե-
պիսկոպոսին ինառիւ զընդամենս սրբոյ Եկե-
ղեցոյ, , , :

“Այցելու հասարակաց հայր վիճակեալս Ապիսկոպոսն, վասն այնորիկ իսկ առանց ակնառութեան պարտ է խնամել զհաւատացեալ նմա յԱստուծոյ զհօտն, և անաշառութեամբ յանձանձել զուխտս սրբոյ Եկեղեցւոյ, տեսուչս և առաջնորդս գաւառաց և գիւղից կացուցանելով, որք անուանին Քորեպիսկոպոսք, զի սրբոց նախնաւորաց օրինաց և հմուտ եղելոց

Աղարշապատաց՝ արժանաւոր է տալ զայնպիսի պատիւս, որք զժողովուրդն բաւական ընին խրատել, շահելով զմեղանչականութեամբն մոլորեալս, և պայծառացուցանելով զճշմարիտսն ճառագայթաւէտ պատուիրանացն պատմութեամբք, զի և Քահանայք առանց տարակուսանաց ուսանիցին մեծարել զԱստուած ընկալ սեղանն, յորոյ վերայ կատարի կենդանարար Խորհուրդն ապրիցուցին մերոյ Տեառն և փրկական, զաւագանն մկրտութեան, որոյ ծննդեամբ վերստին նորոգեմք ի յոյս կոչման Աստուծոյ, , , :

“Երբ մի՛ որ զայսպիսի տեսչութիւնս՝ զինուորաց կամ ազիտաց հաւատացէ, և մի՛ մերձաւորաց իւրոց՝ շնորհուկս ինչ նոցա առնելով սիրով զի զձմամբ, յորմէ կանխաւ հրաժարեցոյց Փրկիչն մեր և Տէր: “Ո՞վ է իմ, ասէ, մայր կամ եղբայր, եթէ ոչ՝ սիրողն պատուիրանացն Աստուծոյ, զոր և արդեամբք իսկ կատարեաց մեզ օրինագրելով. քանզի Յաւորոս և Յուդաս և Յովսէս եղբարք յորջորջէին, և Պետրոս և Յովհաննէս և այլ բազմութիւն աշակերտացն յորով ժամանակս կատարեցին սպասահարկութիւնս, և վիշտը՝ և նեղութիւնս կրեցին զուն զործելով ոգւով չափ. և անօթ ընտրութեան ոչ զոր ի նոցանէ անուանեաց, իսկ Պօղոս որ հալածիչ և թշնամանող զինքն խոստովանէր, անօթ ընտրութեան է ինձ նա՝ կրել զանուէն իմ առաջի հեթանոսաց և թաղաւորացն Իսրայէլի, , , :

“Տեսանեն, զի ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ, եթէ աչսօրիցէք, ասէ, մեղս զործիցէք. արդ եթէ ոչ վարիցի այսպիսի առաքինութեամբ Ապիսկո-

պոսն, ոչ կարէ աշակերտ լինել Տեառն. այլ յոյժ հեռի և օտար է, որպէս զմի ոք ի ստունգանոցացն : Փրկիչն զպատու իրանացն սիրողս և կատարողս սահմանեաց իւր եղբայրս. և թէ՛ Որ սիրէ զհայր կամ զմայր, զուստերս և զգոտերս առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի. և դուք ընդ բարձրանալ հրամանացն՝ վեր ի վայր կործանեալք ընդ երկիր, վարիք զտոհմոյսն ազգականօք, պէս պէս հնարելով հնարս, զի զիրգ և փափուկ առնիցէք, և աւելաստացուածութեամբքն զիզուցուք զտունսքն, մոռանալով զպատգամս ինքնասած Աւետարանի. թէ՛ «Ամենայն տունկ զոր ոչ անկեաց շայրն իմ երկնաւոր՝ խլեսցի», :

«Տեսանէ՞ք, զի զոր յողով ժամանակօքն տաժանիք և ջանայք արմատացուցանել, զկիրս աւուրցն կազմէք որոգայթ սատակման. ըստ այնմ եթէ, «Որ ամբարէ զմեծութիւն առանց իրաւանց, ի կէս աւուրց իւրոց լքցէ զնա», :

«Ջայս ոչ եթէ յաղագս յամօթ ինչ առնելոյ զոք ասեմք, ի խոր խոցելով յանդիմանութեամբ, այլ զի ամենեւեմ մի երեւեսցի յիկեղեցւոյ այսպիսի անօրէն սովորութիւն. քանզի արմատ է ընդհանուր չարեաց և պէս պէս ազգապիղծ անառակութեանց, վասն որոյ գայ բարկութիւնն Աստուծոյ. այլ որպէս վերագոյնն ասացաք, եթէ հասարակաց հայր է եպիսկոպոսն, և ըստ լաւութեան և ըստ յաջողութեան պարտի փայփայել, և յառաջնացուցանել զնմանիսն, և յանձն առնել զգործ Ակեղեցւոյն կանոնիս կարգաց, ուստի այլանդակ անառակութիւնքն և հերձուածք խտրանիսն, և վարք աստուածահաճոյ կենաց հանգերձ բարեպաշտութեամբ պտղալից զարդարին. բայց զիտեմք, զի ոմանք ըմբոստացեալ ճառումարանն, մանաւանդ ազգասէլք ծնկոտք՝ զմարդաբէին ի կիր առնելով զբան. զրեալ է, ասեն, թէ՛ յընտանեաց զաւակի քո զակն մի՛ արկանիցես, և զայն ոչ խմանան՝ եթէ զընտանիս զմիաբանութիւն հաւատոցն կոչէ. վասն որոյ բարձրաբարառ փոլն Ակեղեցւոյ ճշդիւ մեկնելով կոչէ. և զի՞նչ ասիցէ. թէ հնար է, ասէ, ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ. այս է պատճառ ընտանեացն խնամածութեան. բայց թէ և գետնաքարչ ոք և մամռ իցէ, և ի պատճառս բարեպաշտութեան կեղծաւորեսցի սիրել և հարստացուցանել զազգայինսն իւր, լուիցէ միւս ևս բանիցն, որ մեղմով խրատէ. թէ՛ մի՛ զիտացէ ձախքո, զի՞նչ գործեաց աջ քո : Աւ մի՛ ոք իշխեսցէ անամօթ համարձակութեամբ զչարդ զայդ առնել պատճառաւ բարեգործութեան. զի չար է կամակոր լրբութիւն քան զմեղանչին. քանզի եղբայրասպանս կոչին. և Գահէղի որ դառն ազահութեամբն էր զբաղեալ, քան ընդ մեղացն՝ ևս առաւել վասն անամօթ լրբութեանն կրեաց պատիժս պատուհասից, :

«Արդ զգուշութեամբ պահեսցի ի միջի մերում սահմանս այս կանոնական, և մի՛ ոք խոտորեսցի յաստուածահաճոյ հրամանացս այսոցիկ, որովք պայծառանն Ակեղեցիք, բերկրին Քահանայք, զուրախութիւն համբուրին իշխանք և զիզուկըք, երանութիւն և բան զրուտեաց ընդունիցիմք, քանզի պարտ է մեզ ըստ զրեցելոյն՝ վկայութիւն բարի և յարտաքնոցն ընդունել, զի մի՛ անունն Աստուծոյ

«Արդ զգուշութեամբ պահեսցի ի միջի մերում սահմանս այս կանոնական, և մի՛ ոք խոտորեսցի յաստուածահաճոյ հրամանացս այսոցիկ, որովք պայծառանն Ակեղեցիք, բերկրին Քահանայք, զուրախութիւն համբուրին իշխանք և զիզուկըք, երանութիւն և բան զրուտեաց ընդունիցիմք, քանզի պարտ է մեզ ըստ զրեցելոյն՝ վկայութիւն բարի և յարտաքնոցն ընդունել, զի մի՛ անունն Աստուծոյ

և վարդապետութիւնն հայհոյեցի, որպէս երբեմն բողոքէր մարգարէն պարտաւորելով զԽորայելացիսն, թէ անունն Աստուծոյ վասն ձեր հայհոյի ի մէջ հիթանոսաց. իսկ վասն բարեք կարգաց և գործոց մերոց փառաւորեսցին զՀայր մեր որ յերկինս է, ասելով, թէ՛ Առքա են զաւակք օրհնեալք յԱստուծոյ, և ուրախութեամբ ուրախացին ի Տէր. հրեշտակականաւն վարուց և զյաւիտեանական կենացն նմանութիւն *). ո՛չ կաշառք և ոչ ընչից մեծարանք, այլ պարկեշտութիւն և պատուիրանապահութիւն մերձեցուցանէ լինել քաղաքակից սրբոց և ընտանի Աստուծոյ, և զուք յընչասիրութեան և ի կաշառս կործանիք, և զգարշնչին և ըզպատուիրանազանցս, և զզննութիւնս և ըզտգէտս հաւատարիմս համարիք ի գործս պատաւորութեան Աշկիղեցոյ, և ջուրիս ևս յաճախեալ տողէք զկնի ձեր զմերձաւորացն անսւանելոցն. զի հովուութեամբ ձերով այդուրիկ զմիսս ընտրոց ուսուցէք և զոսս նոցա վշրեցէք, կերիցուք արբցուք, ասելով, քանզի վաղին մեռանիմք, :

“Երդ եթէ յԱշկիղեցոյ կամ յԱռաջնորդս Աշկիղեցոյ դացի որ յայսպիսի պատուիրանազանցութիւն . . . ի բաց ընկնայի ի պատուէն իւրմէ, և բաժին նորա ընդ կեղծաւորս եղիցի. զի մարդ ի պատուի էր, և ո՛չ իմացաւ. զի և այլքն երկիցին. և պաշտօն հարկիս այսորիկ մի՛ եղիցի դատապարտութեամբ, այլ փառօք. ապա եթէ որ յիշխանակցաց կամ յաթոռակցաց իւրոց աշտոիցի այնպիսեաց, դա-

տեսցին առաջի Աստուծոյ ընդ այնոցիկ, որք աշտեցան շնորհուկս առնելով՝ Աննա և Ապիափայ քահանայապետից աստուածամարտ ուրացողաց և պարտականաց Տէրունական արեանն, որք տալոց են պատիժս յանապառ յաւիտեանսն, :

“Եւ մեզ եղիցի անբիծ սահմանաւ պատուիրանացս վարել զկեանս մեր պանդխտութեանս, զի յամենայնի հաճոյ լինելով Աստուծոյ, խոստացիլոց բարութեանցն արժանի լիցուք շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ տացուք զօհութիւն և փառս յաւիտեանս յաւիտեանից, ամէն, :

(Շ-բ-ն-է-է).

ԿՐԾՆ ՊԵՏՐՈՍԱԿԵԱԼ.

Այր երբեմն, կամ աւելի պարզ ասելով, մինչև ցնեղկայ Ժ-Թորդ դար՝ հալածումն և բռնութիւնն կիշնէր և կը յաջողէր այս և այն կրօնքը և ազգութիւնքը բռնաբարել և ջնջել, կամ բռնաւորին և հալածչին սեփհական եղած ազգութեան և դաւանած կրօնին հետ ի մի ձուլել :

Քրիստոնէութիւնն թէպէտ դերմարդկային քարոզութեամբք՝ արդեամբք և ըսքանչեւիք, միանգամայն Աւետարանական և Աստուածային հիանալի և զարմանահրաշ ճշմարտութեամբքն կարօտ չեղաւ և չէր այսպիսի միջոցք տարածուիլ ի մարդիկ, սակայն եղան ժամանակներ՝ զի ոմանք անձինք յանդգնեցան յանուն նորա խորամանկ նենդութիւնք մեքենայել, և ո՛րոցս նպատակներ ի փառս մարդկան և մարդկային խորհուրդք էին :

(*) Զօրինակն այսպէս պատկեր լայն գուցէ՝